

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՒՄԱՆՆԱ ԺՈՒԼՎԵՐՆԻ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՊԼԱՆԱԿՈՐՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ
(ՀՀ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ի.Դ. 04.01 - «Երկրաբնապահպանություն» մասնագիտությամբ աշխարհագրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ե Ր Ե Վ Ա Ն - 2 0 1 3

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ХАЧАТРЯН СУСАННА ЖЮЛЬВЕРНОВНА

**ПРИНЦИПЫ ЛАНДШАФТНОГО ПЛАНИРОВАНИЯ ГОРНЫХ РЕГИОНОВ
(НА ПРИМЕРЕ МАРЗА АРАГАЦОТН)**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата географических наук по
специальности 24.04.01 «Геоэкология»

Е Р Е В А Ն - 2 0 1 3

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ աշխարհագրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ռ.Ս.Սկրտչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ աշխ.գիտ.դոկտոր – Գ.Յ.Սայադյան
աշխ.գիտ.թեկնածու, դոցենտ - Լ.Մ.Մարտիրոսյան

Առաջատար կազմակերպություն՝ ԶԶ ԳԳԱ Էկոլոգանոսֆերային
հետազոտությունների կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. մայիսի 3-ին ժ.14:30-ին
ԵՊՀ-ում գործող ԲՈՅ-ի «Երկրագիտության» 005 մասնագիտական խորհրդի նիստում
Հասցեն՝ 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում՝
Սեղմագիրն առաքվել է 2013թ. ապրիլի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Երկրաբ. հանք. գիտ. թեկնածու, դոցենտ

Ս.Ա.Գրիգորյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор географических наук, профессор -
Р.С.Мкртчян

Официальные оппоненты: доктор геогр.наук – О.Я.Саядян
кандидат геогр.наук, доцент – Л.М.Мартиросян

Ведущая организация: Центр экологоноосверных исследований НАН РА

Защита диссертации состоится 3 мая 2013г. в 14:30, на заседании
специализированного совета «Науки о Земле» 005 ВАК-а, действующего в ЕГУ.
Адрес: 0025, г. Ереван, Алек Манукяна 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 2 апреля 2013г.

Ученый секретарь Специализированного совета:
кандидат геолого-минералогических наук, доцент

М.А.Григорян

Աշխատանքի արդիականությունը

20-րդ դարի երկրորդ կեսից մարդածին ծանրաբեռնվածության հարաճուն մեծացման հետևանքով բնատարածքային համալիրները, արագ դեգրադացվելով, կորցնում են իրենց տնտեսական ներուժը՝ այդպիսով խարխլելով հասարակության զարգացման կյուբակյան հիմքերը: Պահանջվում են բնօգտագործման կազմակերպման նոր, առաջադեմ մոտեցումներ: Դրանցից մեկը «լանդշաֆտային պլանավորումն» է (ԼՊ), որը մի քանի տասնյակ տարի լայնորեն կիրառվում է եվրոպական բազմաթիվ երկրներում: 2007թ.-ից լանդշաֆտային պլանավորումը պաշտոնապես ամրագրվել է ՀՀ տարածքային պլանավորման փաստաթղթերում, ինչը խոսում է գործնական բնագավառում նրա արդիականության մասին: Այն հանդիսանում է աշխարհագրական տարածքային պլանավորման համալիր ձևերից մեկը՝ ուղղված լանդշաֆտային երկրահամակարգերի արդյունավետ բնօգտագործմանը և դեգրադացման կանխմանը: Լանդշաֆտային պլանավորման նպատակային հիմնադրույթը՝ կայուն տարածքային զարգացման գաղափարի գործնական իրականացումն է՝ հիմնված հասարակության կարիքների, տնտեսական գործունեության և շրջակա միջավայրի միջև ներդաշնակ հարաբերությունների վրա: Կառավարման ռեգիոնալ (մարզային) մակարդակը հանդիսանում է ամենից շահագրգիռ օղակը տարածաշրջանի զարգացման կայունությունը ապահովելու գործում:

Աշխարհագրական գիտության տեսական նվաճումների և համալիր լանդշաֆտակելոլոգիական մոտեցումների ներդրումը նպաստել է ճյուղային աշխարհագրական գիտությունների զարգացմանը և նոր միջառարկայական ուղղությունների ձևավորմանը: Լանդշաֆտային պլանավորումն ինտեգրում է աշխարհագրության և էկոլոգիայի բազմաթիվ ճյուղերում կատարված ուսումնասիրությունների վերջնական արդյունքները: Վերջին տասնամյակում աշխարհի ամենառեյտինգային աշխարհագրական հրատարակումներում գերակայում է «պլանավորում» թեմատիկան և նրա ենթաբաժին «լանդշաֆտային պլանավորումը», ինչը խոսում է գիտության մեջ նրա արդիականության մասին:

Ատենախոսության թեման հատկապես արդիական է այն առումով, որ դրանով սկիզբ է դրվում ՀՀ-ում լեռնային լանդշաֆտների նպատակային օգտագործման կարգավիճակների հաստատմանն ըստ մարզերի, մասնավորապես Արագածոտնի մարզի խիստ բազմազան, բայց արագ դեգրադացվող լանդշաֆտների պայմաններում:

Աշխատանքի նպատակը և խնդիրները. հիմնավորել և մշակել լեռնային լանդշաֆտների նպատակային օգտագործման օպտիմալացման ուղիները Արագածոտնի մարզի օրինակով:

Նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Լանդշաֆտային պլանավորման խնդիրների լուծման շրջանակներում բացահայտել մարզի լանդշաֆտային բաղադրիչների տարածաժամանակային փոփոխությունների օրինաչափությունները:
2. Մշակել և հիմնավորել մարզի վերընթաց գեոէկոլոգիական գոտիականության սխեման՝ որպես լեռնային լանդշաֆտների պլանավորման իրականացման հենք:
3. Գույքագրել և քարտեզագրել մարզի հողային ֆոնդի առկա տարաֆունկցիոնալ միավորները տարբեր գեոէկոլոգիական գոտիների սահմաններում, գնահատել դրանց էկոլոգիական վիճակը՝ նշանակությունը (բեռնվածություն), զգայունությունը և խախտվածությունը ըստ երկրահամակարգերի:

4. Բացահայտել մարզի տարածքի հիմնական կոնֆլիկտները «սոցիալական միջավայր-բնօգտագործում» համակարգում:
5. Մշակել և քարտեզագրել մարզի երկրահամակարգերի տարածքային զարգացման նպատակները՝ պահպանել, օգտագործել (կառավարել), բարելավել (պլանավորել) գործառույթների պահանջներով:

Օգտագործված ելակետային կյուբը, մեթոդաբանությունը և մեթոդները

Արագածոտնի մարզի լանդշաֆտային պլանավորման խնդիրների լուծման համար հիմնական տեղեկատվական աղբյուր են հանդիսացել բազմաթիվ մենագրություններ, քարտեզագրական և ֆոնդային կյուբեր, տեղեկագրեր, պետական մարմինների ծրագրեր, հաշվետվություններ, ամփոփագրեր և այլ տվյալներ, ինչպես նաև մեր դաշտային ուսումնասիրությունները:

Աշխատանքի իրականացման մեթոդաբանական հիմք են հանդիսացել գեոէկոլոգիական հենքով «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» հիմնարար դրույթները:

Աշխատանքում օգտագործված հիմնական մեթոդներ են հանդիսացել բնական և սոցիալտնտեսական պայմանների տարածքային գեոէկոլոգիական վերլուծությունը և խոշորամասշտաբ քարտեզագրումը, կիրառվել են նաև մաթեմատիկական վիճակագրության, գրաֆների վերլուծական և դաշտային ուսումնասիրությունների մեթոդները:

Աշխատանքի գիտական նորույթը

Առաջին անգամ ՀՀ-ում կիրառվել է լանդշաֆտային պլանավորման հայտնի գործիքը վարչական միավորի (մարզի) մակարդակով՝ հարմարեցնելով այն լեռնային լանդշաֆտների նպատակային օգտագործմանը:

Մասնավորապես, աշխատանքում

- մշակվել և հիմնավորվել է Արագածոտնի մարզի գեոէկոլոգիական վերընթաց գոտիականության սխեման,
- գույքագրվել և գնահատվել են մարզի հիմնական երկրահամակարգերի էկոլոգիական (նշանակությունը (բեռնվածություն), զգայունությունը և խախտվածությունը) պարամետրերը՝ քանակական և որակական,
- վերլուծվել են մարզի լանդշաֆտների խախտվածության հիմնական բնական և մարդածին պատճառները ըստ գեոէկոլոգիական գոտիների՝ բացահայտելով էկոլոգիական առավել վտանգավոր կոնֆլիկտային իրավիճակները, նշելով դրանց մեղմելու ուղիները,
- մշակվել են մարզի լանդշաֆտային պլանավորման սկզբունքները և քարտեզագրվել (1:100 000 մ-բ) լանդշաֆտների տարածքային զարգացման նպատակները՝ պահպանել, օգտագործել (կառավարել), բարելավել (պլանավորել) մոդելով:

Աշխատանքի գործնական նշանակությունը

- Արագածոտնի մարզի լանդշաֆտային պլանավորման մոդելը հանդիսանում է մարզի կայուն տարածքային զարգացման ծրագրի իրականացման նախապայմաններից մեկը, որը կարող է օրինակ ծառայել ՀՀ մյուս մարզերում լանդշաֆտային պլանավորում իրականացնելու գործում:
- Տարածքային կառավարման հանրապետական, մարզային և համայնքային շահագրգիռ օրգանները, ինչպես նաև հասարակությունը հնարավորություն են ստանում ձեռքի տակ ունենալ ամփոփ տեղեկատվություն մարզի բնօգտագործման բնագավառի արդի պարամետրերի և սպասվելիք գեոէկոլոգիական կոնֆլիկտների պատճառահետևանքային կապերի, դրանց վերացման ուղիների վերաբերյալ:

- Աշխատանքի արդյունքները քննարկվել են Արագածոտնի մարզի իրավասու կազմակերպություններում, տնտեսական, բնապահպանական և այլ օրգաններում, ու 2009թ. նոյեմբերի 13-ին մարզպետարանի հատուկ մասնագիտական խորհրդի որոշմամբ դրվել է մարզի տարածքի գոտիավորման «տարածքային կազմակերպման» բաժնի մշակումների հիմքում (փաստաթուղթը կցված է):
- Աշխատանքի որոշ դրույթներ ու արդյունքներ տեղ են գտել ԵՊՀ ուսումնական պրոցեսում, մասնավորապես Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի բակալավրիատի (լանդշաֆտագիտություն; լանդշաֆտային պլանավորում) և մագիստրատուրայի (լանդշաֆտային էկոլոգիա) դասընթացների ծրագրերում:

Պաշտպանության ներկայացվող հիմնադրույթներն են.

- ՀՀ տարածքի լեռնային պայմաններում լանդշաֆտային պլանավորման եվրոպական (դասական) մոդելի կիրառման և տեղայնացման հիմնավորվածությունը՝ պահպանելով հիմնական սկզբունքներն ու հասկացությունները. փուլայնությունը և ստորակարգությունը:
- Մարզի լեռնային տարածքի գեոէկոլոգիական վերընթաց գոտիների բացահայտումը և բնութագրումը, որպես լանդշաֆտների նպատակային օգտագործման սխեմայի անհրաժեշտություն:
- Լեռնային շրջաններում միջին մասշտաբի լանդշաֆտային պլանավորման իրականացման երկրահամակարգային մոտեցման հիմնավորվածությունը:
- Արագածոտնի մարզի երկրահամակարգերի գույքագրման, էկոլոգիական գնահատականի և բարտեզագրման արդյունքների, տարածքային զարգացման՝ պահպանման, օգտագործման (կառավարել), բարելավման (պլանավորել) նպատակների հիմնավորվածությունը:

Աշխատանքի փորձաքննությունը և հրատարակումները

Հետազոտության տարբեր բաժիններ ներկայացվել և գեկուցվել են հետևյալ միջազգային և հանրապետական գիտաժողովներում. ՀՀ ԳԳԱ «Երկրագործության արդի հիմնախնդիրները», IV գիտ. ժողով. (Ե.2001թ.); «Վերականգնողական բժշկության ժամանակակից ասպեկտները», I-ին միջ. Գիտ. ժողով (Ե.2003թ.); «Հարավային Կովկասի և հարակից շրջանների հիմնախնդիրները» (Ե.2005թ.); «Աշխարհագրական գիտությունը Հայաստանում՝ ներկան և ապագան» (Ե.2006թ.); «Գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման և արտադրության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները» (Ե.2008թ.); «Աշխարհագրության գիտակառուցողական ներուժը և դրա գործնական կիրառումը» (Ե.2009թ.):

Աշխատանքը գեկուցվել է քննարկվել է Արագածոտնի մարզպետարանի մասնագետների հատուկ նիստում 2009թ. նոյեմբերի 13-ին: Ուսումնասիրության արդյունքները բազմիցս ներկայացվել են ֆակուլտետային և ամբիոնական սեմինարներում:

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 8 աշխատանք:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը

Աշխատանքը կազմված է նախաբանից, 4 գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից (180 անուն), հավելվածից: Ատենախոսությունը բաղկացած է 150 էջից, պարունակում է 13 նկար, 12 աղյուսակ: Հեղինակը իր խորին երախտագիտությունն է հայտնում ատենախոսության գիտական ղեկավար, ՀՀ ԳԳԱ թղթակից-անդամ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Ս.Սկրոչյանին:

**ԳԼՈՒԽ 1. ԲՆԱԿԱՆ ՄԻԶԱԿԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՏ ԼԱՆՂԵԱՖՏԱՑՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ**

Գլխում ներկայացված են բնություն-հասարակություն հարաբերությունների բարելավման աշխարհագրական սկզբունքների էկոլոգիական ուղղվածությունը, տարածքային կազմակերպման լանդշաֆտաէկոլոգիական մոտեցումը, լանդշաֆտային պլանավորումը աշխարհագրության մեջ որպես գիտական ուղղություն, լանդշաֆտային պլանավորման իրականացման իրավական հիմքերը 33-ում, Արագածոտնի մարզի «լանդշաֆտային շրջանակային պլանի» իրագործման միջոցառումների սխեման:

Բնություն-հասարակություն հարաբերությունների բարելավման սկզբունքների գիտական հիմքերը մշակելիս, և այդ համատեքստում աշխարհագրության հնարավորությունները քննարկելիս, շեշտը դրվում է բնական միջավայրի բարելավման (ԲՄԲ) խնդրի լուծման վրա: Հասարակության տարածքային կազմակերպման կատարելագործման ընդհանուր գործնական ուղղություններից՝ լանդշաֆտային (լանդշաֆտաէկոլոգիական) պլանավորումը ենթադրում է ստեղծել տարբեր տնտեսական օգտագործման մակերեսների հիմնավորված տեղաբաշխում և օգտագործման ռացիոնալ ռեժիմ: Այն նպատակաուղղված է տնտեսական գործունեությունից բնությանը հասցվող վնասների կանխարգելմանը կամ նվազեցմանը և մարդու կենսագործունեության համար բարենպաստ պայմանների պահպանմանը: Այս մոտեցման կիրառման ժամանակ կարևորվում է ոչ միայն տնտեսական շահը, այլև տարածքի օգտագործման այս կամ այն տարբերակի դեպքում էկոլոգիական և ֆիզիկաաշխարհագրական հնարավոր հետևանքները:

Աշխատանքում ԼՊ քննարկվում է որպես աշխարհագրության մեջ գիտագործնական Նոր ուղղություն, որի տեսական հիմքերը մշակել են գերմանական աշխարհագրական դպրոցի ներկայացուցիչները՝ Ա.Վինկելբրանթ, Բ.Միլկեն, Կ.Ֆոն Զաարեն, Ի.Շիլլեր, Վ.Վենդե, Ա.Նոյմանն, Խ.Օլենբուրգ, Ա.Յոպենշտեյն:

Աշխատանքում բացահայտվել են լանդշաֆտային պլանավորման եվրոպական մոդելի մեթոդաբանության, մեթոդիկայի, հասկացությունների, տերմինաբանության կիրառման հնարավորությունները 33 լեռնային պայմաններում, պահպանելով վերլուծության քայլերի հաջորդականությունը և վերջնական նպատակը, ինչը պաշտպանվող առաջին դրույթում հնչում է որպես «պահպանելով հիմնական սկզբունքներն ու հասկացությունները, փուլայնությունը և ստորակարգությունը»: ԼՊ-ը մեթոդապես իրականացվում է հինգ փուլերով՝ լանդշաֆտի գույքագրումից մինչև պլանավորման իրականացման գործողությունների ծրագրի մշակում և երեք մակարդակներով՝ ամբողջ երկրի, տարածաշրջանի, և համայնքների մակարդակով (1:1 000 000-ից մինչև 1:5 000 մասշտաբի): Հենվելով դրանց վրա հիմնավորվել է լեռնային պայմաններում մոդելի տեղայնացում (ադապտացիա) և կիրառում (իմպլեմենտացիա):

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում մշակված և իրականացված ԼՊ եվրոպական մոդելի հաջողված փորձը և Կայուն շարժացման հիմնադրույթները որպես չափանիշ դրված են «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» հիմքում և այժմ օգտագործվում է բազմաթիվ երկրներում: Կարելի է ասել, որ 33-ում կոնվենցիայի ընդունումից հետո ԼՊ գաղափարն իրականացնելու համար իրավական հիմքերը առկա են:

Մեր կողմից մշակված Արագածոտնի մարզի տարածքի ԼՊ «շրջանակային» սխեման (մասշտաբ 1 : 100 000) կարելի է իրականացնել առաջին հերթին առանձին մոդելային տեղամասերում կամ գերատեսչությունների պլանների շրջանակում համաձայնեցնելով այն մարզային բոլոր օղակների և համայնքների հետ:

ԳԼՈՒԽ 2. ԱՐԱԳԱԾՈՆՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՂԱՖՏԱՍՏԵՐԾ ԲՆԱԿԱՆ ԲԱՂԱՂԻԻՉՆԵՐԻ ԳԵՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլխում բացահայտելով մարզի լանդշաֆտային գոտիների գեոէկոլոգիական առանձնահատկությունները իրականացվել են մարզի աշխարհագրական դիրքի, երկրաբանական առանձնահատկությունների ու ռելիեֆի, կլիմայական պայմանների, ջրերի և ջրային ռեսուրսների, հողերի, բուսական և կենդանական աշխարհի գեոէկոլոգիական վերլուծությունները:

Արագածոտնի մարզի տարածքի լանդշաֆտային պլանավորման նպատակով հավաքագրվել և ընդհանրացվել է ողջ տեղեկատվությունը բնական միջավայրի, սոցիալտնտեսական պայմանների, հողօգտագործման կառուցվածքի առանձնահատկությունների մասին, ինչպես նաև բացահայտվել են սոցիալական միջավայր-բնօգտագործում համակարգում առկա կոնֆլիկտները: Խնդիրների լուծման համար հիմնական տեղեկատվական աղբյուր են հանդիսացել բազմաթիվ մենագրություններ: Զ.Գաբրիելյանի, Գ.Գրիգորյանի, Դ.Պողոսյանի, Ռ.Սկրոչյանի, Ա.Խոտցյանի, Վ.Խալատովի Գ.Ավագյանի, Լ.Վալեսյանի, Ռ.Մինասյանի, Բ.Մնացականյանի, Ա.Ավագյանի, Վ.Վարդանյանի, Մ.Մանասյանի և այլոց աշխատանքներ:

Դասական մոդելում լանդշաֆտային պլանավորման գործառնական միավորը լանդշաֆտի բաղադրիչներն են, աշխատանքները իրականացվում են փուլերով՝ լանդշաֆտի գույքագրում, տարածքային էկոլոգիական վերլուծություն և գնահատական, տարածքային զարգացման նպատակների որոշում, առաջնային միջոցառումների և գործողությունների հայեցակարգի մշակում: Բոլոր փուլերի արդյունքներն իրենցից ներկայացնում են քարտեզներ՝ մանրամասն տեքստերով: Համապատասխան լանդշաֆտային պլանավորման ալգորիթմի պահանջների, յուրաքանչյուր հաջորդ փուլում ինտեգրվում են նախորդում ստացված քարտեզագրական նյութերը: Սա մոդելի պարզեցված ձևն է:

Հայտնի է, որ տարածքի լանդշաֆտային երկրահամակարգերի գեոէկոլոգիական վերլուծությունը իրականացվում է երկու հիմնական մոտեցումների կիրառմամբ՝ աշխարհագրական (տարածաժամանակային) պատկերը և էկոլոգիական (տարածքային էկոլոգիական պրոցեսների վերլուծություն): «Արժեքայնության» և «խոցելիության» գեոէկոլոգիական գործոնների վերլուծությունը աշխատանքում արվել է ՀՀ Արագածոտնի մարզի օրինակով:

Ելնելով դասական մոդելի պահանջներից ուսումնասիրվող տարածքի գեոէկոլոգիական գույքագրումը իրականացվել է ըստ լանդշաֆտի բաղադրիչների. ռելիեֆ, կլիմա, հողեր, ջրեր, բուսականություն, լանդշաֆտ (գնահատվում է որպես առանձին գործոն)՝ բացահայտելով դրանց հնարավոր նպատակային գործառնությունները:

Այսպիսով Արագածոտնի մարզի լիթոլոգիական հիմքը և ռելիեֆը արժևորվել են որպես էկոգործոններ՝ ելնելով այն դրույթից, որ կայուն տեղամասերը առավել արժեքավոր են տնտեսական գործունեության ձևերի մեծ մասի համար և փոխվում են բարձրադիր գոտիականությամբ: Քննարկվել են տարածքի երկրաբանական հիմքի տարաբնույթ կազմը, մարզի ռելիեֆի հիմնական պատկերը՝ ըստ բարձրադիր գոտիականության, տարածքի ռելիեֆի էկոլոգիական կայունության ինտեգրալ պատկերը, գործնականում անսպառ պեռլիտի, խարամի և կավի հանքավայրերի առկայությունը: Կլիման արժևորվել է որպես ագրոռեսուրս, ռելիեֆից և էներգիայի այլընտրանքային աղբյուր: Ներկայացվել է կլիմայական ցուցանիշների տարածաժամանակային փոփոխություններն 1000-ից 4000մ բարձրությունների սահմաններում, այդ թվում ջերմաստիճանն ու տեղումները բոռնոհզոպլետների ձևով: Հողը նույնպես

արժևորվել է ըստ առանձին գործառնությունների և առաջին հերթին որպես ագրոռեսուրս: Մարզը հողօգտագործման տեսակետից ռիսկային է, քանի որ հողատարածքների մեծ մասը ցածր բոնիտետի հողեր են. հումուսային շերտը և հումուսի պարունակությունը փոքր է, ուժեղ քարքարոտ, ռելիեֆի մեծ թեթևություններով: Տրված և բարտեզագրված են մարզի հիմնական հողատիպերի քանակական և որակական ցուցանիշները: Ջրային բաղադրիչը արժևորվել է որպես խմելու ջրի, ոռոգման և հիդրոէներգիայի աղբյուր: Այդ նպատակով դիտարկվել են տարածքի ջրային հաշվեկշիռը, իսկ ջրի ինքնամաքման ունակությունը ներկայացված է Քասախ գետի հիդրոլոգիական և հիդրոքեմիական ուսումնասիրությունների տվյալների հիման վրա: Ելնելով տարածքի հիդրոերկրաբանական առանձնահատկություններից՝ որպես հոսքագոյացման հիմնական գոտի՝ արժևորվել են նիվալ գոտին և չինգիլների տարածման արեալները: Ջրային ռեսուրսների ոչ մեծ ծավալ ունեն նաև մի շարք ջրային օբյեկտներ (աղբյուրներ, ջրանցքներ, ջրամբարներ, գետեր, լճեր, ստորերկրյա ջրավազաններ, ֆիռնային կուտակումներ): Կենսաբազմազանության պահպանման համար արժեքավոր են համարվել մարզի միակ արգելավայրը, «առաջին կարգի» անտառը, «Կարմիր գոբում» ընդգրկված ցենոզների առավել խիտ արեալները, բոլոր բուսական գոտիներում մարդու կողմից օգտագործվող բուսատեսակների, որսի համար նախատեսված վայրի կենդանիների և թռչունների տարածման խիտ արեալները, ինչպես նաև մարզի տարածքի լանդշաֆտաէկոլոգիական կարկասի (ԼԷԿ) Էկոհամակարգային նշանակություն ունեցող հանգուցային բնաէկոլոգիական էլեմենտները: Առանձին քննարկման առարկա է հանդիսացել արհեստական կենսացենոզների արդյունավետությունը գյուղատնտեսական լանդշաֆտներում: Լանդշաֆտը՝ որպես առանձին էկոգործոն գնահատվել է բարձրադիր լանդշաֆտային գոտիականության կտրվածքով՝ որպես բնական լանդշաֆտների իդեալական կոնցեպտուալ-մեթոդոլոգիական մոդել, լանդշաֆտի ռեկրեացիոն պոտենցիալը բացահայտվել է բնական և մարդածին արեալների «արժեքավոր», «առանձնահատուկ», «յուրահատուկ գնահատականների միջոցով (աղյուսակ 6):

Արժևորվել է լիթոլոգիական հիմքի, ինչպես նաև ռելիեֆի ոչ միարժեք կայունությունը մեխանիկական հողմահարման ազդակների և տեղատարման գործընթացների նկատմամբ՝ ելնելով տարածքի մորֆոմետրիական հատկանիշներից (լանջերի թեթևություն և կողմնադրություն, մասնատման խորություն և խտություն): Բնության անբարենպաստ և վտանգավոր երևույթների շարքում կարևորվել է տարածքի սելավավտանգությունը՝ հաշվի առնելով սելավ Մաստարայի գոյությունը մարզում: Դիտարկվել է մերձգետնյա օդի աղտոտվածության պատկերը: Որպես հողի զգայունության ցուցանիշ ընտրվել է էրոզացվածության աստիճանը, որը առանձնակի կարևորվել է մշակովի հողատարածքների ոռոգման դեպքում: Բնական խտածածկով տարածքներում որպես խոցելիության ցուցանիշ ընտրվել է վերգետնյա կենսազանգվածի վիճակը: Անտառների դեպքում գնահատվել է անտառահատման և հրդեհավտանգության աստիճանը: Ջրային բաղադրիչի խոցելիությունը արժևորվել է՝ ելնելով հոսքագոյացման հնարավորություններից հուլիս-օգոստոս ամիսներին: Տարածքի խոցելիության պատկերը ներկայացված է նաև ըստ բարձրության գոտիների բնակչության բաշխվածության աստիճանի՝ հիմնված մարզի բնակավայրերի 2010թ. բնակչության թվի տվյալների վրա: Միևնույն բաղադրիչի որոշ ցուցանիշներ օգտագործվել է ինչպես արժեքայնությունը, այնպես էլ խոցելիությունը գնահատելիս: Քննարկվել է մարզի լանդշաֆտների խոցելիության պատկերը՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխության հետ (աղյուսակ 6):

ԳԼՈՒԽ 3. ԱՐԱԳԱԾՈՆՏԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՆՆԱԾՏՆԵՐԻ ՄԱՐԱԾԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գլխում իրականացվել է մարզի բնակավայրային և արտադրական լանդշաֆտների, մարզի հողային ֆոնդի վերլուծությունը, քննարկվել են մարզի տնտեսական զարգացման հայեցակարգը և հեռանկարները, բացահայտվել են մարզի Էկոլոգիական կոնֆլիկտների առանձնահատկությունները:

Գլխում իրականացվել է մարզի տարածքի Էկոլոգիական կարկառը կազմող երկրահամակարգերի՝ բնակավայրային և արտադրական (գյուղատնտեսական, տրանսպորտային, հանքարդյունաբերական, ռեկրեացիոն, անտառտնտեսական և այլն) գեոԷկոլոգիական գույքագրումը և վերլուծությունը, որի արդյունքում մարզի տարածքում ի հայտ են բերված երկրահամակարգերի հիմնական տիպերը: Լ^Պ ընթացքում իրական թվերի հետ աշխատելու հնարավորություն ունենալու և դրա արդյունքները սպառողին մատչելի, ճանաչելի դարձնելու համար. խնդիր է առաջադրվել հողային ֆոնդը, այսինքն հողօգտագործման իրական պատկերը ներկայացնել ըստ երկրահամակարգերի (բնական և հասարակական կատեգորիայի տարածքներ): Մարզի հողային ֆոնդի վերլուծությունը պարզել է, որ մարզի ամենամեծ տարածք զբաղեցնող «արոտ» հողատեւք անվան տակ միավորված են մի քանի երկրահամակարգեր. անվշակ առապարային «դռերը», արոտավայրերը, խոնավ մարգագետինները, ալպյան մարգագետինները և այլն:

Մարզի տնտեսական տարբեր ճյուղերի միջև հաճախ առաջանում են տարածայնություններ հողի և այլ ռեսուրսների նպատակային օգտագործման շուրջ: Այդ հարցը քննարկելիս և առաջարկություններ անելիս ղեկավարվել ենք մարզի հողօգտագործման պատկերով, ինչպես նաև ֆիզիկա-աշխարհագրական պայմանների բազմա-կողմանի գնահատականով և հնարավոր Էկոլոգիական հետևանքների կանխատեսումով, սոցիալ-տնտեսական իրավիճակներով (դիտարկվել է օգտագործման տեսանկյունից), տարածքային կառավարման իրականացման իրավական հիմքերով, երկրի քաղաքաշինական փաստաթղթերի հիմնական դրույթներով, օգտագործվել են զարգացման պետական քաղաքականության հիմքում ընկած առկա ազգային ռազմավարական փաստաթղթերը:

Աշխատանքի այս գլխում քննարկվել են Արագածոտնի մարզի տնտեսական զարգացման հայեցակարգը և հեռանկարները, իսկ տնտեսության զարգացման թեզերից կարևորել ենք մարզի հեռանկարային զարգացումը որպես Երևանյան ագլոմերացիայի մաս, գյուղատնտեսության զարգացման բարենպաստ գործոնների լիարժեք օգտագործումը (բավարար գյուղատնտեսական հողային և ջրային ռեսուրսների առկայությունը), արդյունաբերության զարգացման գերակայությունը հումքի տեղական բազայի, կատարյալ տեխնոլոգիաների վրա:

Վերլուծվել են մարզի լանդշաֆտների խախտվածության հիմնական բնական և մարդածին պատճառները՝ ըստ գեոԷկոլոգիական գոտիների՝ բացահայտելով Էկոլոգիական առավել վտանգավոր կոնֆլիկտային իրավիճակները (վարելահողերի, արոտավայրերի և անտառների խախտվածություն), որոնք սրվում են բնության անբարենպաստ և վտանգավոր երևույթների (սելավներ, Էրոզիա, երաշտներ) պայմաններում և նշվել կոնֆլիկտները մեղմելու ուղիները: Աշխատանքի այս գլուխը պարունակում է մարզի բնառեսուրսային պոտենցիալի, տարածքի իրական օգտագործման և բնության պահպանության խնդիրների վերաբերյալ միջին (տարածաշրջանային) մասշտաբի բնութագրիչներ, ինչպես նաև բնապահպանական տեսակետից նպատակահարմար բնօգտագործման և տարածքի զարգացման նպատակների վերաբերյալ ցուցումներ:

ՊԼՈՒԽ 4. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՂԱՖՏԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Չվխում ներկայացվել են մարզի լանդշաֆտային բաղադրիչների գեոէկոլոգիական գնահատման սկզբունքները, լեռնային պայմաններում լանդշաֆտային պլանավորման դասական մոդելի տեղայնացման սկզբունքները, մարզի երկրահամակարգերի էկոլոգիական վիճակների գույքագրման, գնահատման տարածքային զարգացման նպատակների սկզբունքները և արդյունքների հիմնավորումը:

ԼՊ առաջին փուլում իրականացվել է մարզի լանդշաֆտային բնական բաղադրիչների գեոէկոլոգիական գույքագրումը (2-րդ գլխում): Երկրորդ փուլում բաղադրիչները գնահատվում են ըստ էկոլոգիական ցուցանիշների՝ «նշանակության» և «զգայունության»: Երրորդ փուլում որոշվում են մարզի լանդշաֆտների «տարածքային զարգացման նպատակները»:

Ամփոփելով բազմաթիվ հետազոտությունների նյութերը՝ մշակվել է լանդշաֆտի բաղադրիչների «զգայունության» գնահատման եռաստիճան սանդղակ: Այդ ցուցանիշների հիման վրա ԼՊ դասական մեթոդով ստեղծված միջին մասշտաբի ինտեգրալ բարտեզը լեռնային տարածքների դեպքում չի տալիս ԼՊ ալգորիթմի համար կիրառելի արդյունքներ: Ըստ արդյունքների մարզում պահանջվում են մեծ տարածքներ (70-80%), որոնք պետք էր հանել տնտեսական շահագործումից, ինչը հողասակավ երկրում հնարավոր չէ: Այսպիսով, հիմնավորվում է ՀՀ տարածքի լեռնային պայմաններում ԼՊ դասական մոդելի տեղայնացման անհրաժեշտությունը: Մյուս ցուցանիշի՝ «նշանակության» համար, լանդշաֆտի բաղադրիչների գույքագրման բարտեզների (աղյուսակ 6-ի №1-ից №15) գնահատման անհրաժեշտությունը վերանում է: Բաղադրիչային հետազոտությունների արդյունքներն օգտագործվել են ԼՊ մոդելը լեռնային պայմաններին հարմարեցնելու հետագա աշխատանքների ընթացքում:

Եվրոպական մոդելը լեռնային պայմաններին հարմարեցնելու համար լանդշաֆտի միջին մասշտաբի ԼՊ աշխատանքները իրականացվել են ըստ երկրահամակարգերի: Տարածքը գնահատող էկոգործոնների ընդունված ցանկին՝ մերձգետնյա մթնոլորտ, հողեր, ջրեր, բիոտոպեր և լանդշաֆտ, ավելացվել է ռելիեֆը՝ որպես առաջնային գործոն: Բացի այդ, տարածքը օպտիմիզացիայի է ենթարկվել ոչ թե որպես մի ամբողջություն (արեալ), այլ ըստ գեոէկոլոգիական շրջանների և վերընթաց գոտիների: Մտցվել է լանդշաֆտի էկոլոգիական վիճակի գնահատման լրացուցիչ ցուցանիշ՝ խախտվածությունը: Արդյունքում մշակվել է բալային գնահատման համակարգ, որն ապահովում է գեոէկոլոգիական ցուցանիշների համեմատելիությունը: Վերը նշվածը այս կամ այն ձևով հիմնավորում է պաշտպանվող առաջին երեք դրույթները:

Տարածքի «նշանակություն» էկոլոգիական ցուցանիշը արտացոլում է մարդու համար օբյեկտների գործառույթային սպառողական նշանակությունը: Ելնելով օբյեկտների հիմնական ֆունկցիոնալ արտադրական գործառույթից՝ հասարակության կողմից կանոնակարգվում է լանդշաֆտում մարդու ներկայության ինտենսիվության (բեռնվածության) աստիճանը:

«Զգայունություն» (խոցելիություն) էկոլոգիական ցուցանիշը արտացոլում է երկրահամակարգի ունակությունը դիմակայելու արտաքին գործոններին՝ նրա դիմադրողականությունը՝ կախված լիթոլոգիական հիմքի կայունությունից, ռելիեֆի ձևաչափական ցուցանիշներից, կլիմայից, հողատիպից, բուսածածկի բնույթից և այլն:





































Լեռնային տարածքներում լանդշաֆտի «խախտվածության» էկոլոգիական ցուցանիշը արտացոլում է լանդշաֆտի նշանակության և զգայունության ինտեգրալ պատկերը՝ ըստ բարձրադիր գոտիականության: Լանդշաֆտի «խախտվածությունը»

Նրա տարբեր օղակներում արտահայտվում է գրավիտացիոն և կենսաբանական հավասարակշռությունների խախտումներով, ջրաջերմային հաշվեկշռի փոփոխությամբ և այլն: Այս գեոէկոլոգիական գնահատականն իր մեջ խտացնում է նաև մարզի էկոլոգիական կոնֆլիկտների պատկերը: Խախտվածության բացահայտման լավագույն եղանակը էկոլոգիական վիճակի գույքագրումը և մոնիթորինգն է:

Մարզի տարածքում ըստ ծագումնաբանական հատկանիշների, ջրաջերմային ռեժիմի և բնօգտագործման բնույթի առաջին անգամ առանձնացված երեք տարատիպ գեոէկոլոգիաների և հինգ վերընթաց գեոէկոլոգիական գոտիների սահմաններում (Նկար 1) ի հայտ է բերված մարզի էկոլոգիական կարկասը կազմող երկրահամակարգերի 36 տեսակներ(միավորներ), որոնք գույքագրվել և խըմբավորվել են (Նկար 2):

Առանձնացված են երկրահամակարգերի հետևյալ խմբերը՝ հողատարածքներ (14 օբյեկտներ), երկրաբանական և գեոմորֆոլոգիական (7 օբյեկտներ), ջրային (10 օբյեկտներ), մարդածին (6 օբյեկտներ) և այլ տիպի օբյեկտներ: Դրանք դրվել են տոպոգրաֆիական հիմքի վրա (1:100 000 մասշտաբի) (Նկար 2):

Աղյուսակ 1

Գործոն/ բալ	Թույլ զգայուն	Միջին զգայուն	Ուժեղ զգայուն	Տարածքները մարզում
Մակերևույթի խորքային մասնատվածությունը (d)	<0.5 և 100-400 	50-100 	0.5-50 	
Մակերևույթի հորիզոնական մասնատվածությունը (կմ/կմ ²)	0.1-0.2 	0.2-1.6 	>1.6 	
Մակերևույթի թեթության անկյունը (աստիճան)	3° 	3-10° 	>10° 	
Լեռնալանջերի կողմնադրությունը	հյուսիսային, հարթություններ 	արևելյան և արևմտյան 	հարավային 	
Սելավավտանգավորություն (սելավ/տարում)	1/10 	1/3-10 	1/1-3 	
Երոզացվածության աստիճանը, տարածքի մակերեսն (%) ընդհանուրից	0- 10 	10- 15 	>25 	
Խոնավացման գործակիցը (ԽԳ)	>1.0 	0.65 - 1.0 	<0.65 	
Խոտածածկի կենսազանգվածը (g/հա)	>24 	12-24 	0- 12 	
Բնակչության թիվը (մարդ/կմ ²)	<100 	100 - 1000 	>1000 	

Էկոլոգիական գործոնների նկատմամբ մարզի տարածքի զգայունության գնահատման աստղակ

Մարզի լանդշաֆտների գույքագրման ժամանակ առանձնացված երկրահամակարգերի Էկոլոգիական գնահատականը իրականացվել է երեք Էկոլոգիական ցուցանիշներով:

Առաջին Էկոլոգիական գործոնը (մարդածին), ըստ որի գնահատվել է մարզի տարածքը՝ նշանակությունը կամ բեռնվածությունն է: Տարածքի նշանակությունը գնահատելիս օգտագործվել է հողային ֆոնդի շահագործման նորմատիվային հենքի վրա ստեղծված՝ Կոչուրովի, Գլազովսկու, Կորենկովի հայտնի «տարածքի գեոէկոլոգիական իրավիճակի ինտեգրալ դասակարգման» հայտնի մոդելի եռաստիճան տարբերակը, որում ըստ չափորոշիչների «ցածր մարդածին ծանրաբեռնված (նշանակության)» են համարվել բնապահպանական և չօգտագործվող տարածքները, «միջին»՝ ռեկրեացիոն տարածքները, խոտհարքները, անտառները և այլ սահմանափակ օգտագործվող տարածքները: Ամենամեծ խումբը կազմել են «բարձր մարդածին ծանրաբեռնված (նշանակության) տարածքները», դրանք են արդյունաբերական, տրանսպորտային, խախտված հողերի տարածքները, բաղաձիգ ինֆրակառուցվածքները, չորացվող և ոռոգվող տարածքները, հերկված, ինտենսիվ անտառահատվող տարածքները, արոտավայրերը և խոտհարքի ոչ ռացիոնալ օգտագործման տարածքները, բազմամյա տնկարկները: Մարզում մարդածին ծանրաբեռնվածության (նշանակության) երևույթը նվազում է ըստ բարձրության՝ 100-ից մինչև 0%: Տարածքի նշանակությունը որոշված է երկրահամակարգերի շահագործվող և դրանց ընդհանուր մակերեսի տարածքի հարաբերությամբ, ընդ որում ինչքան մեծ է ֆունկցիոնալ արտադրական նշանակությունը, այնքան մեծ է տարածքի շահագործումը: Գնահատականները տրված են հետևյալ սանդղակով՝ թույլ 0-25%, միջակ 25-40% և ուժեղ>40-50%:

Երկրորդ Էկոլոգիական գործոնը (բնական), ըստ որի գնահատվել է մարզի տարածքը, երկրահամակարգերի զգայունությունը կամ խոցելիությունն է: Այս ցուցանիշը գնահատելիս՝ հիմնականում հենվել ենք «*Էկոլոգիական գործոնների նկատմամբ մարզի տարածքի զգայունության գնահատման*» սանդղակի վրա (աղյուսակ1), հաշվի ենք առել սիսեմատիկ բարտեզները, որոնցում արտահայտված է խոցելիության առավել բնորոշ պատկերը լանդշաֆտի որևիցե բաղադրիչի համար: Տարածքի զգայունության Էկոլոգիական ցուցանիշը գնահատվել է՝ ելնելով ներկա գործառնության և այդ գործառնության համար առավել եական բաղադրիչի (բաղադրիչների) համար արված Էկոլոգիական գնահատականներից: Մարզի տարածքի զգայունության վերջնական գնահատականը տրվել է երկրահամակարգերի անկայուն տարածքի և ընդհանուր տարածքի մակերեսների հարաբերությամբ, ըստ որում ինչքան մեծ է անկայուն մակերես, այնքան մեծ է զգայունությունը (ուղիղ կապի մեջ է): Գնահատականները տրված են հետևյալ սանդղակով՝ թույլ-0-25%, միջակ-25-40% և ուժեղ>40-50%: Երկրահամակարգերի հիմնական մասի համար առաջնային է համարվել կենսաբաղադրիչի զգայունությունը:

Երրորդ Էկոլոգիական գործոնը (ինտեգրալ), ըստ որի գնահատվել է մարզի տարածքը՝ խախտվածությունը կամ լարվածությունն է: Խախտվածությունը գնահատելիս՝ հաշվի է առնված հաշվեկշռային այն մեծությունը, որը ստեղծվել է մարդածին ուժերի և երկրահամակարգերի ինքնավերականգնողական ունակությունների միջև: Տարածքի խախտվածության ցուցանիշի տվյալները ձեռք են բերվել հիմնականում գույքագրման (տարածաժամանակային պատկեր) և դաշտային հետազոտությունների ամփոփման արդյունքում: Մարզի երկրահամակարգերի խախտվածության մասին տեղեկատվությունը վերցրել ենք նաև մարզպետարանի

հաշվետվություններից, որտեղ նշված են բոլոր տիպի հողահանդակների ընդհանուր և դեգրադացված տարածքների մակերեսները: Դրանց հարաբերությունը արտահայտում է տարածքի խախտվածության օբյեկտիվ պատկերը: Լանդշաֆտների խախտվածության ցուցանիշը թույլ փոփոխված լանդշաֆտներում տրվել է՝ ելնելով վերականգնվող սուկցեսիաների աստիճանից: Մարդածին փոփոխված լանդշաֆտներում խախտվածությունը գնահատվել է՝ ելնելով բնական և կուլտուրական լանդշաֆտների մակերեսների հարաբերակցությունից, ինչպես նաև տեխնածին և մարզինալ տարածքներում յուրացման էկոլոգատեխնիկական մակարդակից: Տարածքի էկոլոգիական խախտվածությունը գնահատվել է երկրահամակարգերի խախտված և ընդհանուր մակերեսների հարաբերությամբ (ուղղակի կապով), եռաստիճան ասնդղակով՝ թույլ- 0-25 %, միջակ- 25-40 % և ուժեղ > 40-50%:

Գնահատման արդյունքները ներկայացված են քարտեզներով (նկար 3, 4, 5): Դրանց մակերեսները հաշվարկվել են հեկտարներով և տոկոսներով (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Էկոլոգիական վիճակը (հա և %)	Թույլ	միջակ	Ուժեղ
Նշանակությունը (բեռնվածությունը)	16348 (6%)	174318.1 (63.2%)	84965.9 (30.8%)
Զգայունությունը (խոցելիությունը)	15285 (5.5%)	174750.7 (63.4%)	85721.6 (31.1%)
խախտվածությունը	14544 (5.3%)	155553.8 (56.4%)	105534.2 (38.3%)

Տարածքի գեոէկոլոգիական գնահատականները հեկտարներով և տոկոսներով

Արագածոտնի մարզի «լանդշաֆտային շրջանակային պլանի» սխեմայի ամփոփման աշխատանքները ավարտվել են երրորդ՝ տարածքային զարգացման նպատակների որոշման փուլով:

Մարզում գույքագրված 36 տեսակի երկրահամակարգերի էկոլոգիական գնահատականը իրականացվել է եռաբալ համակարգով՝ ըստ գեոէկոլոգիական շրջանների և վերընթաց գոտիների: Կիրառելով առաջարկված ալգորիթմը յուրաքանչյուր տեսակի երկրահամակարգի համար՝ ամեն մի գեոէկոլոգիական գոտու սահմաններում ստացվում է տարածքային զարգացման մեկ օպտիմալ (ինտեգրացված) տարբերակ (աղյուսակ 2): Յուրաքանչյուր գոտում երկրահամակարգի տեսակի համար տարածքային զարգացման նպատակը որոշելիս՝ կարևորվել է տվյալ գոտում նրա ներկայիս (հիմնական) կամ նպատակահարմար գործառույթը: Առաջնային է համարվել նախատեսված գործառույթի համար առավել էական բաղադրիչի (հիմնական ցուցանիշի) էկոլոգիական վիճակը, գեոէկոլոգիական գնահատականում դրա արժեքի նշանակությունը և առանձնահատկությունը: Այսպես, օրինակ, եթե մշակովի հողատարածքների համար կարևորվել է հողի բերրիության աստիճանը, ապա արոտավայրերի ու խոտհարքերի համար՝ ջերմա և խոնավապահովվածությունները, իսկ անտառների համար՝ բոնիտետը և այլն:

Մարզի հիմնական երկրահամակարգերի գեոէկոլոգիական ցուցանիշների գնահատականների արդյունքները և երկրահամակարգերի տարածքային զարգացման լավագույն (օպտիմալ) նպատակներն ըստ գեոէկոլոգիական շրջանների և վերընթաց գոտիների ամփոփ ներկայացված են աղյուսակ 3-ում: Վերջինս առաջարկ է Լ⁷ մոդելը ներկայացնել աղյուսակի ձևով: Այն քարտեզագրվող նյութը դարձնում է թափանցիկ և կարող է որոշ դեպքերում փոխարինել վերջինիս՝ հնարավորություն տալով, անհրաժեշտության դեպքում, կատարել խմբագրումներ՝ չխախտելով մոդելի կառուցվածքային ամբողջականությունը:

Երկրահամակարգերի տիպերը	Արժեքայ նությունը	Չգայու նությունը	Լարվա ծությունը	Տարածքի զարգացման լավագույն (օպտիմալ) նպատակ
1	2	3	4	5
ԱՐԳԱԾԻ ԼԵՈՆԱԶԱՆԳՎԱԾԻ ՇՐՋԱՆ՝				
1. Ցածրադիր կիսամասպատային լանդշաֆտաեկոլոգիական գոտի				
1. Անմշակ, առապարային «դռեր»	միջակ	միջակ	միջակ	սահմանափակ օգտագործում
2. Վարելահողեր և բազմամյա տնկարկներ	ուժեղ	միջակ	ուժեղ	օգտագործում, հնտենսիվացում
3. Շինանյութերի հանքավայրեր	ուժեղ	ուժեղ	ուժեղ	օգտագործում, հնտենսիվացում
4. Պետական սահմանի հողատարածքներ	թույլ	թույլ	թույլ	սահմանափակ օգտագործում
5. Հատուկ նշանակության տարածքներ	միջակ	միջակ	միջակ	սահմանափակ օգտագործում
6. Կիրճեր	թույլ	թույլ	թույլ	բարելավում, ռեկրեացիա
7. Հրաբխային կոներ	թույլ	թույլ	թույլ	բարելավում, ռեկրեացիա
8. Արգևի-Շամիրամի և Թալինի ջրանցքներ	ուժեղ	ուժեղ	ուժեղ	օգտագործում, բարելավում
9. Սելավային հուններ	թույլ	միջակ	միջակ	բարելավում
